

ըրջանի մասին, զոր ինչպէս տեսանք՝ 1492ի տոնները կը նշանակէ, մինչ իրապէս 1273էն վերջ չի կրնար ըլլալ:

Սակայն ինչպէս բացատրել Սիմէոն Կաթողիկոսի առնչութիւնը Գէորգ Խուրովի եւ իր կեղծիքին հետ:

Արդարեւ Սիմէոն Կաթողիկոս կրնար եղած ըլլալ Գէորգ Խուրովի հօրեղբայրը: Կրնայ ըլլալ նաեւ որ Սիմէոն Կաթողիկոսի աշխարհական անունը եղած ըլլայ Խուրբաշխ, թէեւ այսուր այդ մասին վկայութեան չենք հանդիպիր: Սակայն Սիմէոն Կաթողիկոսի կենսագրութեան մէջ կամ այլ վաւերագրութեանց մէջ ան երբեք Պոռեան կամ Խաղրակեան չէ ներկայացուած, թէեւ տեղ մը իր մասին ըսուած է «նա ինքն մասնաւոր իմն իշխան» (4) Սակայն այս անորոշ պատուածներ երբեք մեզի չի կրնար ենթադրել տալ որ Սիմէոն Երեւանցի Պոռեան էր ծագումով:

Սիմէոն Կաթողիկոս մեռաւ 26 Յուլիս 1780 ին: Գէորգ Խուրովի «գրականութիւնը» այսինքն տոհմածառերը, յիշատակագրութիւնները եւայլն բոլորն ալ կը ստեղծուին Սիմէոն Կաթողիկոսի մահէն շատ վերջ: Իր Զօնին թուական նկատեցի 1798, երբ Կիօրկի Վրաց գահը բարձրացաւ. այդ տոնն արդէն իշխանազուն, արքայազուն եւ նոյն իսկ Հայոց թագաւոր ըլլալու յաւակնութիւնները ունէր Գէորգ Խուրով, որ անկէ վերջ իր աստիճանը հիմնաւորելու համար սկսաւ ինքզինքը Պոռեան կամ Խաղրակեան սերունդէ ներկայացնել, մինչեւ Արշակունեաց... տանելով իր ծագումը:

Յաջողեցաւ ինքզինքը հաստատել տալ Վրաց կամ Ռուսաց արքունեաց մէջ իբր հայ իշխան: Դժբաղդարար որեւէ ապացոյց չունիմ հաստատող կամ ժխտող: Գէորգ Խուրով ինքզինքը կը ներկայացնէ իշխան Խուրով: Սակայն այս իշխան տիտղոսը պաշտօնապէս հաստատուած է թէ ինքնակոչ է՝ չեմ գիտեր: Ծանօթ է կոնդակ մը Յովհաննէս Կաթողիկոս Կարբեցիէ՝

ուղղեալ «ազնիւ աղայ Կարապետ Ղուբովին» Յունիս 10, 1832 թուակիր, ուր Կարապետ Ղուբովը կը կոչուի «Զեորգ ազնիւ բարետոհմութիւն» սակայն ոչ իշխան, Պոռեան, Խաղրակեան, եւն: Սյս Կարապետ Ղուբովը եղբայրը ըլլալու է Գէորգ Խուրովին, որ անոր անունը կուտայ իր ուսման տոհմածառին մէջ: Խուրովները կրնային «բարետոհմ» ըլլալ, սակայն ասկէ Պոռեան ցատկելու (թող Արշակունի ըլլալու) կարելիութիւնը դժբախտաբար իրականանալի չէ:

Պոռեան տոհմին կալուածներուն վիճակը եւ իրենց սերունդէն մինչեւ 1705 համադրեալ գոյութիւնը պատճառ եղած է որ ուրիշները յաւակնութիւն ունենան այդ տոհմին կապելու իրենց ծագումը:

Ասոնցմէ նշանաւորագոյնն է Իսրայէլ Օրի, որ 1699 ին կեղծած թուղթերուն մէջ ինքզինքը Պոռեան կը ջանայ ներկայացնել, թէեւ անկէ շատ առաջ Փարիզի մէջ հայ իշխանազուն մը ներկայացուցած էր ինքզինքը, մինչեւ որ նիւթական իւրացումներու պատճառաւ ստիպուեցաւ փախչել անկէ Տիւսէլտօրֆ:

Յետոյ ունինք այս Գէորգ Խուրովը՝ Ունինք նաեւ Պերճ Պոռեանցէ (հեղինակ Կռուածաղիկ, Շահեն, վէպերուն) որ 1880ին ՓՈՐՁ ամսագրին թիւ 10ին մէջ ջանաց ապացուցանել թէ Խուրեան եւ Պոռեան կապը կը սկսի Լաչիով (մեռած 1317 ին): Պերճ Պոռեան՝ ծնած Տէր Առաքելեան, ի զուր կ'աշխատի իր այդ յաւակնութեան համար: Իբր Պոռեանց գերդաստանի ծանօթ եւ ընդունուած յիշատակաւորներուն ոչ մէկուն մէջ կը յիշուին այն անձերը՝ որոնցմէ իբր թէ ծնած կամ յառաջացած են Խուրեան սերունդի անդամներ, ըլլան անոնք մտացածին եւ կամ թէ իրապէս ապրող, երբ Խուրեան տոհմածառերը պատրաստուած են:

Յ. ԳԻՒՐՏԵԱՆ

(4) Այդ - էջ 102.

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ

ԳՐԶԱԳՐԵՐԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՄՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
«ՀԱՂԱՏԻ Ս. ՆՇԱՆ ՎԱՆՔԻ» ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՎԱՅՃԱՆԸ

1778-1799 թ. թ.

ԵՒ

Ս. ԻԶՄԻԱԾՆԻ ՎԱՆՔԻ ՎԱԿԵՐԱԳԻՐՆԵՐԻ

ԱՆԵՒՂՃ ՈԶՆԶԱՅՈՒՄՆ ՀԱՂԱՏՈՒՄ

1824 թ.

Յովհաննէս Եպ. Սուրենեան Ղրիմեցին եղել է Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի առաջնորդ 1824 թ. մինչեւ իր մահը, 13 Դեկտ. (հին տոմարով) 1848 թ. Թաղուած է Ս. Ամենափրկչեան վանքի վանքի արեւելեան մասում:

Սա եղել է գլխաւորապէս եւ բանասէր հոգեւորական, եւ ըստ Մեսրոպ Թաղադեւորական, եւ ըստ Մեսրոպ Թաղադեւորական «Ճամբորդութիւն ի Հայաստան» հիմնադրուած եղել է աստեղատուութեան՝ Էջմիածնում եղել է աստեղատուութեան, եւ այդ պաշտօնի բերումով՝ Եփրատի, եւ այդ պաշտօնի բերումով՝ Եփրատի կաթողիկոսը 1821 թ. Էջմիածնից իր հետ տարել է Հաղբատ, ուր մնացել է՝ հաւանօրէն՝ մինչեւ 1829 թ.:

Յովհաննէս Եպիսկոպոսից Ս. Ամենափրկչեան վանքի մատենադարանում կայ մի անտիպ աշխատութիւն, 239 համարի ներքոյ, հետեւեալ խորագրով.

Պատմութիւն

Հոչակաւոր վանից Հաղբատայ

Սր. Նշանին

Հիմնեալ Յարճաւագիրս

Նախնեաց

Այս աշխատութեան մէջ, բացի յառաջաբանից, նա տալիս է Հաղբատի եւ շրջակայքի մասին տեղագրական մանրամասն տեղեկութիւններ, ինչպէս եւ կլիմայի ու բուսականութեան: Նկարագրում է վանքի տեղակայութիւնը եղող գիւղերի, կալուածների եւ հողամասերի մասին. այնուհետեւ նկարագրում է վանքը եւ շրջակայքում գտնուող նուիրական վայրերը. իսկ գրքի վերջում համառօտ կենսա-

գրականներն է տալիս, սկզբից մինչեւ իր օրերը, այնտեղ պաշտօնավարող վանահայրերի մասին: Ըստ իր գրքի յառաջաբանի, մեծ նեղութիւն է կրել վերծանելու կիսամաշ, մամուլապատ արձանագրութիւնները, որոնք էլ այն աստիճան քայքայուած են եղել, որ երբ սանդուղքով բարձրացել է մօտից դիտելու եւ ստուգելու, երբ ձեռքով ցանկացել է մի քիչ մաքրել տառերը, հողի պէս թափուել են: Թէ ի՞նչքան է աշխատել այդ արձանագրութեանց վրայ թող ինքը պատմէ.

«Եւ եղեւ թիւ բովանդակ արձանագրաց Հաղբատայ աւելի քան զհարիւր: Թող զհամառօտ կամ զմիաբառ տապալանագիրս, թող եւ զՍանահնի եւ զայլոց տեղեաց արձանագրութիւնսն, զոր ուրեք ուրեք յընթացս դործոյս յառաջ բերաք եւ յորոց զմեծ մասն եղաք ի վարդա առաջնորդաց նորին Սանահնի: Սակայն զարանագիրս Սանահնի գրովանդակն չեղաք ձեռնհաս անձամբ գաղափարել կամ սըրբագրել, վասն որոյ եթէ թերութիւն ինչ կամ վրիպակք յոմանս ի նոցանէ յայտնեսցին՝ հայցեմ ներողամիտ լինել »:

Մի այլ նեղութիւն էլ է քաշել. մի հըմուտ նկարչի ձեռքով պատկերահանել է տուել Ս. Նշանի վանքը. բայց դժբախտաբար այդ նկարը չի մնացել:

Հաղբատի վանքն ունեցել է եօթն գլխաւոր վանքերի պահեստ.

Երկու վերնախորան՝ բուն տաճարում.

Չորս խորան՝ զանգակատան վերնախորան:

այն քարայր է, առ որ յաճախէր միշտ Յովհաննէս սարկաւազ վարդապետ յընթերցումն զըրոց, որպէս զլէ Կիրակոս ի վարս նորա: Եւ ահա զայնչափ բաղմունքին մատենից, չգիտեմ յի՞նչ պատճառաւ, Աբրահամ վարդապետ ամսօրեայ ժամանակօք աշխատեալ ընդ սարկաւազի իւրում, բովանդակ ի վայր իջուցանէ, եւ բերեալ աստ ի վանքս զնէ ի ներքնայարկն զանդատան. եւ յո՛չ բաւեալ տեղւոյն ըզբովանդակն տանել, ընու եւ յայլ զանազան տեղիս ի խորանս եւ ի մատրոնս, յորմէ օր ըստ օրէ պակասեալ, ցրուեալ եւ յափշտակեալ ի զոլոց, եւ յամենեցունց. որոց մի անգամ հասին ձեռք. այժմ եւ ոչ տեսարկ մի ի նոցունց երեւի ի միջի. եւ չգիտեմ թէ զիարդ կորեան կամ անհետ եղեն այնչափ անհամար մատենք. մանաւանդ ստուարադոյնքն ի նոցանէ, եւ առաւել մեծամեծքն: Ասի յաւանատեսից, թէ վերոյիշատակեալ Պետրոս սարկաւազ զյոլովս ի մատենից անտի, որ վտեալք էին ըստ մասին, կամ ցրուեալք ի թերթս թերթս եւ ի տետրակս, ժողովեալ առ հասարակ հանդէպ զանազան դրան՝ իբրեւ տան կամ երկոտասան ոտնաչափ թանձրութեամբ, հուր էարկ, եւ այրեաց զամենայն իբրեւ զանպիտանս:

★

Նոյն եւ զուցէ աւելի վատ վախճանի են հասնում էջմիածնի վանքի վաւերագիրները: 1821 թ. Եփրեմ Կաթողիկոսն իր շքախումբ հոգեւորականներով հեռանում է էջմիածնից եւ ժամանակաւորապէս հաստատուում է Հաղբատի Ս. Նշան վանքում: Այստեղ Ներսէս Եպ. Աշտարակեցու խորհրդով՝ էջմիածնից բերել են տալիս վանքի վաւերագիրներն, երեւի վանքի հաշիւներին եւ զործերին վերահասու լինելու համար: Հիմա տեսնենք ի՞նչ է պատմում Մեսրոպը Թաղիադեանցն այդ վաւերագիրների մասին՝ իր «Ճամբորդութիւն ի Հայս» գրքում, սկսեալ 333 էջից.

« Խորհրդով Ներսէսի Արքեպիսկոպոսի աման յէջմիածնէ բեռինք երեքինք թըղ-

թոց, յորոց թէպէտեւ հաւաքել մարթ էր աղբի աղբի ծանօթութիւնս հնութեանց, սակայն տարաբախտապէս յայլ խմն ըզբաղեալ զոլով՝ անտես արարաւ: Ընթեռնուաք զնոսա, որքան հարեւանցի եւ կարեւոր լինէր ի մէջը, յորս դռանէաք զթիւ եւ զհնչիւն դրամոց՝ պահէաք. եւ յորս ո՛չ՝ ժողովեալ ի հուր՝ յաճիւն դատէաք: Յանցանել աւուրց ինչ եւ ի տաղտկանալ զործոյն ի վերայ պարապասէր որենոյ(3), բազում այն էր զի եւ առանց ինչ ի նմա նշմարելոյ յանպիտանիս դատէաք: Եւ այսպէս զսակաւս ի սակաւուց ընտրելով, զվերաբերեալս դրամական մտից Աթոռոյն, զայլովքն բոլորեքումքը զաչս կառուցանէաք: Ոչ կարեւմ զսպել աստանօր զմտածութիւնն, թէ զիցուք թէ մեք մանկունք կամ մանկամիտք ամենեքին՝ անփոյթ արարաք զայնքան հինաւուրց թըղթովք, ուստի մարթ էր հաւաքել վճիտ անցս ժամանակացն եւ փարթամացուցանել զպատմութիւն եւ զգիտութիւն աղբին, տեսուն Ներսէսի իմաստնոյ եւ աղբաւրի զի՞ եղեւ արդեօք, որ թոյլ ետ այնմ: Յապահօվի նստեալ՝ խորհել եւ խօսել կարեմք՝ զոր ինչ միտք տուն տան. բայց եթէ այր մի միայն. եւ ի հազար վարանս տարակուսանաց զբաղիցուք, որպէս Հայն էր յայնժամ, բարուք եւս առնեմք՝ եթէ լուսցուք »:

Ուրեմն այդ երեք բեռ վաւերագիրներն աղբի ու մաղել են եւ մէջն որքան մուրհակ որ ճարել՝ պահել են, եւ մնացեալը վառել:

Ահա երկու նշանաւոր մտաւոր կեդրոնների Հայ մտքի արդասիւքի պահպանումն. եւ սա կատարուել է ո՛չ թէ թշնամի ասպատակների եւ բռնակալների կամ այժմեան ոճով օտար զաւտիչների կողմից, այլ Հայ բարձրաստիճան գիտակ ու անգիտակ հոգեւորականների գիտութեամբ ու մասնակցութեամբ:

Ս. ՀԱՆԱՆԵԱՆ

Նոր-Ջուղա - Սպահան, 7 Դեկտ. 1955 թ.

(3) որենոյ - որերոյ (մարդոց):

CAMBIAMENTI DI STRUTTURA DEL VERBO ARMENO

TEMPI, MODI E ASPETTI IN ARMENO (1)

In questa relazione verranno esposti da una parte uno studio sul rifacimento del verbo armeno e d'altra parte alcune osservazioni sull'influenza degli aspetti su certi modi e tempi dello stesso verbo. Eppure non si tratta di fare un semplice studio in un campo particolare, ma di portare a conoscenza dei miei colleghi linguisti certi fatti armeni che possono, per la loro originalità, essere interessanti per gli studi di linguistica generale...

*
**

La struttura del verbo armeno classico era la seguente:

A) *Modi*: indicativo, soggiuntivo-ottativo, imperativo, participio, infinito.

B) *Tempi*: L'indicativo possiede: presente, imperfetto, perfetto, passato prossimo e trapassato prossimo, questi due ultimi tempi essendo composti.

Il soggiuntivo possiede un presente e un aoristo. Quest'ultimo serve: 1°) come ottativo: *եղիցի լոյս* «Fiat lux»; 2°) come soggiuntivo futuro: *... զի եղիցի* «... affinché sia»; 3°) come futuro dell'indicativo secondo il sentimento moderno del futuro: *եղիցի* «sarà». E da osservare che il futuro non è ancora uscito dal modo soggiuntivo-ottativo.

Inoltre, è, morfologicamente, lo stesso tempo che serve di perfetto nel modo indicativo e di futuro nel congiuntivo. L'imperativo ha un presente fatto sul tema presente o sul tema passato secondo le persone e i tipi di coniugazione e comprende anche forme seconde derivate dal futuro. C'è inoltre un presente formato sul tema presente, speciale per il proibitivo. Il participio non ha ancora un presente. Ha un passato che può talvolta servire di passato per l'infinito e viene persino anche usato come participio presente. Ha inoltre un futuro, ac-

(1) Relazione fatta l'11 Settembre 1953 al Convegno Internazionale di Linguisti organizzato a Milano dal Sodalizio Glottologico Milanese, Presidente Prof. Dr. Vittore Pisani.